Հայաստան

Ապրիլ – հունիս, 2022 թ.

ՄԱԿ ՓԳՀ-ն շարունակել է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում **իրավական պաշտպանության մշտադիտարկում** իրականացնել: Ընդհանուր առմամբ, պաշտպանության մշտադիտարկման համակարգում ընդգրկվել է ՄԱԿ ՓԳՀ մտահոգության ներքո գտնվող 1,328 անձ, որից 1,078-ը՝ ԼՂ հակամարտության հետեւանքով տեղահանված:

Փախստականների համաշխարհային օրվա առթիվ ՄԱԿ ՓԳՀ-ն կազմակերպել էր մի շարք միջոցառումներ, այդ թվում «Ֆուտբոլ՝ ի համերաշխություն #փախստականների» ընկերական խաղ եւ ինտերակտիվ միջոցառումներ Գորիս քաղաքում, որին մասնակցում էին տեղացի եւ տեղահանված երեխաներն ու նրանց մարզիչները:

ՄԱԿ ՓԳՀ-ն **լրատվամիջոցների հետ նախաճաշ էր կազմակերպել՝** նվիրված «Լրատվամիջոցները եւ միգրացիան» փոքրածավալ ծրագրի մեկնարկին, որի շրջանակում 2022 թվականին լրագրողների համար իրազեկության բարձրացման մի շարք հանդիպումներ եւ վերապատրաստման դասընթացներ են նախատեսվում:

ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

330 հեռախոսազանգ

կատարվել է 167 մարդու կողմից՝ ՄԱԿ ՓԳՀ թեժ գծին, որը սպասարկում է ՄԱԿ ՓԳՀ գործընկեր ԿԱԶԱ շվեյցարական մարդասիրական հիմնադրամը: Մտահոգության հիմնական թեմաներն առնչվել են մարդասիրական օգնությանը, սոցիալական եւ վարչական ծառայությունների հասանելիությանը, ինչպես նաեւ ապաստանի ընթացակարգերի հասանելիությանը:

2,412 մտահոգության ներքո գտնվող անձի

սոցիալական ծառայություն եւ խորհրդատվություն է տրամադրվել ՄԱԿ ՓԳՀ գործընկեր «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի կողմից:

379 մտահոգության ներքո գտնվող անձ

մասնակցել է ՄԱԿ ՓԳՀ գործընկեր Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից կազմակերպված ընդհանուր բնույթի տեղեկատվական եւ տնտեսական ինտեգրման հավաքների:

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ (2022 Թ. ՀՈՒՆԻՍԻ 28-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ)

Ֆինանսական պահանջներ
13.8 միլիոն ԱՄՆ դոլար

Ֆինանսավորված մաս՝
15%
2.1 միլիոն ԱՄՆ



Պակասող ֆինանսավորում՝
85%
11.7 միլիոն

#Փախստականների համաշխարհային օրվա տոնակատարությունը՝ միջմշակութային միջոցառումներով եւ երեխաների ձեռքի աշխատանքներով ©ՄԱԿ ՓԳՀ

ՄՏԱՀՈԳՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ* 2022 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ



** Աղբյուրը. ՄԱԿ ՓԳՀ Տարեկան վիճակագրական զեկույց, 2022 թ. փետրվար*

Գործառնական համատեքստ

ՄԱԿ ՓԳՀ ծրագրված գործողությունները 2022 թվականի համար

2022 թվականին ՄԱԿ ՓԳՀ-ն շարունակում է իր նպաստը բերել փախստականներին վերաբերող համապարփակ օրենսդրության մշակմանը, շահերի պաշտպանության գործողություններին, ՄԱԿ ՓԳՀ մտահոգության ներքո գտնվող անձանց հետ աշխատող Միգրացիոն ծառայության, սահմանապահների, դատական համակարգի եւ Հանրային պաշտպանի գրասենյակի իրավաբանների կարողությունների զարգացմանը: Ի լրումն, ՄԱԿ ՓԳՀ-ն նախատեսում է տեխնիկական աջակցություն ցուցաբերել Աբովյան քաղաքում կառուցվող Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնին, ինչպես նաեւ մշակել հեռակա ուսուցման ծրագիր Սահմանապահ ծառայության անձնակազմի համար, ներառյալ՝ համապատասխան համակարգչային սարքավորումների տրամադրումը:

ՄԱԿ-ի ՓԳՀ-ն, իր գործընկերների հետ համատեղ, աջակցում է խաղաղ գոյակցության 12 նախագծերի եւ համայնքահեն կազմակերպությունների ներկայացրած 10 նախագծերի, որոնց նպատակն է տնտեսական ինտեգրման խթանման եւ հյուրընկալող համայնքներում խաղաղ գոյակցության պահպանման նպատակով միջոցների եւ համայնքային համախմբման առաջմղումը: Հատուկ ուշադրություն է դարձվում տեղահանված անձանց մոտիվացմանը եւ հասարակության կյանքում նրանց ներգրավմանը, որպեսզի նրանք իրենց նպաստը կարողանան բերել հյուրընկալող համայնքներ:

Տեղահանված անձանց բարեկեցության եւ հիմնական կարիքների բավարարման նպատակով ՄԱԿ ՓԳՀ-ն շարունակում է տրամադրել դեպքերի կառավարման եւ մասնագիտացված ծառայություններ՝ հիմնված իրավական պաշտպանության մշտադիտարկման եւ օգնության թեժ գծի գործարկման արդյունքների վրա: Կենսապահովման ծրագրերի, ինչպես նաեւ մասնագիտական դասընթացների եւ հայոց լեզվի դասընթացների հասանելիության ապահովման հետ մեկտեղ՝ ՄԱԿ ՓԳՀ-ն շարունակում է դրամական աջակցություն ցուցաբերել առավել խոցելի տեղահանված անձանց: Կարեւոր գործողություն է լինելու նաեւ երեխաների պաշտպանության կարիքների վերհանման եւ գենդերահեն բռնության զոհերի վաղ հայտնաբերման ու արձագանքման համապատասխան գործողությունների կազմակերպման թեմաներով գործընկեր կազմակերպությունների կարողությունների զարգացումը:

ՄԱԿ ՓԳՀ Գորիսի գրասենյակի բացման պաշտոնական արարողությունը 2022 թ. մայիսի 24-ին, Վերիշեն գյուղ, Սյունիքի մարզ: ©UNHCR

Ձեռքբերումներ. 2022 թ. ապրիլ-հունիս

253 մտահոգության ներքո գտնվող անձ, ըստ խոցելիության աստիճանի, դրամական օգնություն է ստացել (ներառյալ բնակարանների վարձավճարների սուբսիդավորում եւ բազմանպատակ դրամական հատկացումներ) ՄԱԿ ՓԳՀ գործընկեր «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ից:

687 մտահոգության ներքո գտնվող անձի տրամադրվել են առողջապահական ծառայություններ ՄԱԿ ՓԳՀ գործընկեր «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի կողմից:

495 մտահոգության ներքո գտնվող անձ բժշկական օգնություն է ստացել «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի կողմից:

138 մտահոգության ներքո գտնվող անձ ստացել է իրավաբանական խորհրդատվություն եւ աջակցություն «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի կողմից:

21 մտահոգության ներքո գտնվող երեխայի եւ գենդերահեն բռնության 5 զոհերի տրամադրվել է դեպքերի մասնագիտացված կառավարում ՄԱԿ ՓԳՀ-ի գործընկեր Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից:

35 տարեցների եւ հատուկ կարիքներ ունեցող անձանց ցուցաբերվել է օժանդակություն «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի կողմից:

84 մտահոգության ներքո գտնվող անձ մասնակցել է Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից կազմակերպված խմբային հոգեբանական սեսիաների:

79 մտահոգության ներքո գտնվող անձ ստացել է եկամտի ստեղծման գործիքներ Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

- ՀՀ Միգրացիոն ծառայության խնդրանքով ՄԱԿ ՓԳՀ-ն աջակցում է ՀՀ կառավարությանը՝ 2021 թվականի մայիսին ընդունված՝ Միգրացիայի պետական կառավարման հայեցակարգը կյանքի կոչելու գործում: Այս աջակցության շրջանակում վերջերս ՄԱԿ ՓԳՀ-ն **ֆինանսավորել է Հայաստանի ապաստանի համակարգում առկա կարողությունների բացերի եւ կարիքների համապարփակ գնահատում,** որը ծառայել է որպես փաստական հիմք միգրացիոն հոսքերի կառավարման ազգային ծրագրի մշակման համար:
- **Կարողությունների զարգացում.** Հաշվետու ժամանակահատվածում նոր հավաքագրված 24 սահմանապահներ օգտվել են «Փախստականների մասին» օրենքի թեմայով վերապատրաստման դասընթացից, որը կազմակերպվել էր ՍԶ ուսումնական կենտրոնում, իսկ Զվարթնոց օդանավակայանի 14 սահմանապահներ օգտվել են «Փախստականների մասին» օրենքի թեմայով մասնագիտական ուսուցման դասընթացից:
- Փախստականի կարգավիճակը սահմանող պետական լիազոր մարմինն **ապաստանի հայցման 30 գործերում օգտվել է փորձագիտական աջակցությունից:**

ՈՉ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ

- Կարիքների գնահատման հիման վրա՝ ՄԱԿ ՓԳՀ գործընկեր «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ն ոչ պարենային օգնություն **(կենցաղային պարագաներ եւ հագուստ)** է տրամադրել մտահոգության ներքո գտնվող 170 անձի: Մտահոգության ներքո գտնվող շուրջ 147 անձ **հիգիենայի պարագաներ են ստացել:**
- Մտահոգության ներքո գտնվող 21 երեխա, որոնք առաջին դասարան են ընդունվել, Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից **դպրոցական պարագաներ են ստացել:**

Գործընկերային աշխատանք

- ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակը, ՄԱԿ-ի հայաստանյան թիմի հետ միասին, համագործակցում է պետական եւ ոչ պետական շահակից մարմինների հետ: ՄԱԿ ՓԳՀ-ն անդամակցում է ՄԱԿ-ի միջգործակալական համակարգման մի շարք հարթակների ու մեխանիզմների: ՄԱԿ-ի երկրի հավաքականի հետ համատեղ՝ այն խթանում է Հայաստանում «Կայուն զարգացման օրակարգ 2030»-ի կենսագործման աշխատանքները՝ 2021-2025 թթ. ՄԱԿ-ի Կայուն զարգացման համագործակցության շրջանակի միջոցով:
- ՄԱԿ ՓԳՀ-ն բազմամյա համագործակցության համաձայնագիր ստորագրեց **ՀՀ Փաստաբանների պալատի հետ (ՓՊ):** Փաստաբանների պալատի հետ իրականացվող նախագիծը, որն իրականացվում է Եվրոպական միության եւ ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից համաֆինանսավորվող «Միգրացիայի կառավարման կարողությունների հզորացում՝ ի աջակցություն Կառավարության՝ CEPA-ին համահունչ բարեփոխումների օրակարգի» ծրագրի շրջանակում, ուղղված է Հանրային պաշտպանի գրասենյակի կարողությունների հզորացմանը եւ իրավաբանական օգնության հայցման պայմանների ու ընթացակարգերի, անվճար իրավաբանական օգնության ու ներկայացվածության դերի վերաբերյալ ՄԱԿ ՓԳՀ մտահոգության ներքո գտնվող անձանց իրազեկվածության բարձրացմանը:

Ֆինանսական տեղեկություններ

2022 թվականին ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակը փորձում է **13.8 միլիոն** ԱՄՆ դոլար հայթայթել՝ փախստականի իրավիճակում գտնվող անձանց կարիքների բավարարման եւ իր տարեկան ծրագրի ծախսերը հոգալու նպատակով:

ՄԱԿ ՓԳՀ-ն երախտապարտ է Եվրոպական միությանը եւ Ամերիկայի Միացյալ Նահանգներին՝ 2022 թվականին Հայաստանում իրականացվող իր ծրագրերին աջակցելու համար:

ՄԱԿ ՓԳՀ-ն նաեւ շնորհակալություն է հայտնում հետեւյալ դոնոր կառույցներին, որոնք 2022 թ. գլոբալ ծրագրերին առանց նախապայմանների հատկացրել են ավելի քան 10 միլիոն ԱՄՆ դոլար.

Շվեդիա | Նորվեգիա | Նիդեռլանդներ | Դանիա | մասնավոր դոնորներ՝ Իսպանիա | Միացյալ Թագավորություն | մասնավոր դոնորներ՝ Ճապոնիա | Գերմանիա | Ֆրանսիա | Շվեյցարիա | մասնավոր դոնորներ՝ Կորեայի Հանրապետություն | մասնավոր դոնորներ՝ ԱՄՆ | Բելգիա | Իռլանդիա | Իտալիա

Ալժիր | Հայաստան | Բուլղարիա | Կանադա | Կոստա Ռիկա | Էստոնիա | Ֆինլանդիա | Իսլանդիա | Լիխտենշտեյն | Լիտվա | Լյուքսեմբուրգ | Մոնակո | Չեռնոգորիա | Նոր Զելանդիա | Պերու | Ֆիլիպիններ | Քաթար | Կորեայի Հանրապետություն | Սաուդյան Արաբիա | Սինգապուր | Թաիլանդ | Թուրքիա | Ադրբեջան | Ուրուգվայ | մասնավոր դոնորներ

Առանց նախապայմանների հատկացված միջոցները որեւէ սահմանափակմամբ չկաշկանդված այն գումարներն են, որոնց շնորհիվ ՄԱԿ ՓԳՀ-ն հնարավորություն է ստանում ճկուն կերպով օժանդակելու մտահոգության ներքո գտնվող՝ ծայրահեղ կարիքավոր եւ վտանգված բնակչությանը:

Մանրամասն տեղեկությունների համար այցելեք UNHCR Operational Data Portal եւ UNHCR Armenia website

ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակ, Արամազդ Ղալամքարյան, արտաքին կապերի համակարգող, **ghalamka@unhcr.org**